



ԿՃՈՂՆԵՐՈՒ ԵՒ ԾԱՂՐՈՂՆԵՐՈՒ ՕՈԿԱՆ

ԵՒ
ԱԶԳ. ԵՐԳԻԾԱԲԱՆԱԿԱՆ-ՍԱՏԻՐԱԿԱՆ
ԾԱՂՐԱԹԵՐԹ

Որ ամէն բան կը մտնուի, չստանալ կը պատահէ, չկարող կը նկատուի,
միտ կ'երեւակայէ, կը ծաղիկ եւ... Եւրոպական
Այս ամէնը կը հաւաստէ, կը դատաւարէ, կը խմբագրէ
ԳԻՐԿԱՅԻ ԹՈՐՈՍՅԱՆ (Բ. ԼՈՌԻՍԻՆԵԱՆ)

Հասցէ՝ Ղալաթիա, Գուրգուշու խան թիւ 7

5 ՆՈՅՆԻՍԵՐ 1908 ՉՈՐԵՔԵԱՐԹԻ

«ԿԱՎՈՇ» — «ԾԱՂԻԿ» ԵՂԲԱՅՐԱՅՈՒԹԻՒՆ

— ՆՈՐ ԿԱՆՈՆԱԳԻՐ —

Ամէն մարդ դիտել կուտայ մեզ քէ՛ Կավուօս եւ Ծաղիկ միասին տա-
սուդի կը նստին:

— Մենք Կավուօսն ալ Ծաղիկն ալ չենք կրնար զատել, կ'ըսեն, բայց
գիտեցիր ի՞նչ մը ամացող չէ, որպէս զի երկուքին մէկանց բաժանող գրուի:

Մեր բարձրագոյն ասեանը այս փափուկ խնդիրը նկատողութեան առնելու
համար բացառիկ նիւս մը գումարեց եւ որոշեց հետեւեալ վերջնական սակագինը:

★ Կավուօս եւ Ծաղիկ միասին, տարեկան, Պոլսոյ համար 80, վեցամս-
եայ՝ 45 դրու: Կավուօս կամ Ծաղիկ՝ առանձին՝ տարեկան 45 դրու:

Կավուօս եւ Ծաղիկ միասին, տարեկան, Գաւառի համար 100, վե-
ցամսեայ՝ 60 դրու: Կավուօս կամ Ծաղիկ՝ առանձին՝ տարեկան 60, վե-
ցամսեայ՝ 35 դրու:

Կավուօս եւ Ծաղիկ միասին, Սրաւառահանի համար տարեկան 25 ժր.,
վեցամսեայ՝ 13 ժր.: Կավուօս կամ Ծաղիկ՝ առանձին՝ տարեկան 15, վե-
ցամսեայ՝ 8 ժրան:

★ Ձիւք քեր կուտանք կը եւ զանազան քեր մտնուող:

Բայց ամէն մարդ գիտէ որդէն քէ մենք փարայի համար չենք աշխատի, —
ո՛հ, Բա՛ն ի՞նչի, — այլ Հա՛յ ազգին համար:

Թիւ 44

10 ՓԱՐՍ

„ԱՍԱՅԻԾ ՊԵՐՔԵՄԱԼ ՏԵՐ“

ԲԵՐՔԱՆԻ ԶԱԽԵՇՏ Ի ԲԱԶՈՒՄ ԱՐԱՐՍ

Հեղինակ՝ ԾՈՐԻՍԻՆԵԱՆ ԻՍԿՐԻՔ

Գաւառներու մէջ հարստահարու-
թիւններ կ'ըլլան:

«Ասայիշ պէր քէմալ տըր» կը գրէ
Շուրաի Իւնիկը:

Պոլսոյ պատերու վրայ ջարդի
նախայայտարարութիւնները կը փակ-
ցնեն:

«Ասայիշ պէր քէմալ տըր», կ'ըսէ
Շուրաի Իւնիկը:

Անառապի մէջ ամէն մարդ ա-
նօթութենէ իրար կ'ուսանէ:

«Ասայիշ պէր քէմալ տըր», կ'ըսէ
Շուրաի Իւնիկը:

Ռէտրոսիւնները նորէն կը սկսին
լրինց ճիւղիւրը չալել:

«Ասայիշ պէր քէմալ տըր», կը
յարէ Շուրաի Իւնիկը:

Երեսփոխանական ու թաղապե-
տական ընտրութեանց առթիւ ամէն
մարդ իրարու գլուխ կը պատէ:

«Ասայիշ պէր քէմալ տըր», կ'ըսէ
Շուրաի Իւնիկը:

Թերթերը կտուտարութեան բն-
թացքին կը յարձակին գիշեր ցորեկ:

«Ասայիշ պէր քէմալ տըր», կը
պոռայ Շուրաի Իւնիկը:

Անկուտութենէ խեղճին կ'ա-
նիծուի:

«Ասայիշ պէր քէմալ տըր», կը
յանկերդէ Շուրաի Իւնիկը:

Վաղը եթէ իրար իրաւցնէ կտոր
կտոր ալ ընկու ըլլանք, նորէն
Շուրաի Իւնիկը՝ «Ասայիշ պէր քէ-
մալ տըր» պիտի ըսէ:

Այսչափ լաւատեսութիւն գա-
րու էն մեծ լաւատես փիլիսոփային
քով իսկ չէ տեսնուած:

Շուրաի Իւնիկը, Կառավարու-
թեան պաշտօնաթերթը, կապոյտ
ակնոց մը անցուցած քիթին՝ ամէն
ինչ կապոյտ կը տեսնէ:

Թո՛ղ կապոյտ ակնոցը քիչ մը
վար առնէ քիթէն եւ ճիւղակ ակ-
նոցով նայի ամէն բանի եւ թո՛ղ այն
ստեն ըսէ թէ... «Ասայիշ պէր քէ-
մալ տըր»:

Լաւատես ըլլալը չա՛տ ազուր
բան է, բայց ո՛չ ասոր մէջ:

Օրինակի համար, մենք լաւատես
ենք եւ կը կարծենք թէ մեր քսակը
մի՛շտ պիտի լինուի:

Մեր քսակը չի լեցուիր երբէք,
բայց նորէն լաւատես կը մնանք
մենք:

Ասով ա՛յ ազգը կը կորսնցնէ, ո՛չ
պատմութիւնը, ո՛չ ալ նշանակ... իմ
քսակս:

Ես իմ գեղեցկութեանս մասին
չտո լաւատես դադարիս մը ունիմ:

Ի՞նչ կրնաք ըսել թէ ես ազգը
ազալ մըն եմ, քիթս խոշոր է, պե-
տիս սիրուն չեն:

Բայց ես որ լաւատես եմ իմ գե-
ղեցկութեանս մասին, կը պնդեմ թէ
յո՛ւր աստիք ստիտ են եւ բոլոր կի-
նները կը խնդկեն իմ ազուրու-
թեանս:

Դուք յոռետե՛ս էք իմ տաղան-
դին նկատմամբ:

Կրնա՛ք ըլլալ:

Բայց ես որ լաւատես եմ միշտ,
կը պնդեմ թէ անագին տաղանդ մը
ունիմ ես, եւ Յ. Յ. Պարոնեան ինչ
չտո վերջը կուգայ:

Այսպէս պարագայներու մէջ լա-
ւատեսութիւնը կը հասկնամ, բայց
լաւատես ըլլալ մահամերձ հիւանդի
մը անարին մօտ... ասիկա խելք
չէ՛:

Մարդը կը մեռնի կոր, վերջին
չունչը պիտի փչէ...

Խնդալթիւն պիտի ըլլար այս
մարդուն վրայ ըսել:

Ձէ, բան մը չունի, սքանչելի
է առողջութիւնը, վաղը փողոց կ'ել-
լայ կը պտրտի:

Վաղը մարդը... կը ճողի:

Ասոր վրայ՝ լաւատեսութեան գե-
րագոյն combleին հասած կ'ըլլանք
երբ ըսենք:

— Ո՛ղ ըսաւ թէ մեռաւ... իրա՛ւ,
հիմա մեռաւ, բայց վաղը առնու-
յարութիւն պիտի առնէ:

Անա՛ ճիշդ ասոր կը նմանի Շու-
րաի Իւնիկը՝ «Ասայիշ պէր քէմալ
տըր» ըսելը:

«Ասայիշ պէր քէմալ տըր» բա-
ցատրութիւնը ժողոված ենք Թուր-
քիոյ մեծ ջարդէն:

Ան առնէ ասպէս կ'ըլլար:

Ենթադրենք թէ տեղ մը ջարդ
եղաւ, կիներ առեւանգեցին, աղջիկ-

ներ պղծեցին, մարդիկ ջարդեցին...

Հետեւեալ օր թերթերուն մէջ կը
կարդայինք:

«Շուրաի... այսինչին այսինչ տեղ
անդորրութիւնը եւ խաղաղութիւնը
կը տիրէ»:

«Ասայիշ պէր քէմալ տըր...»

Հրամար է՛ք, Պ. Շուրաի Իւն-
իկը, «Ասայիշ պէր քէմալ տըր»...

Բայց, ո՛ր:

Ապահովաբար... անգիտի աշխար-
հին մէջ:

ԳԻՐ ԹՈՐՈՍՅԱՆ

ԿՈՎԿԱՍԱՆԱՅ ԲԱՆԱՍԵՂԾՈՒԹԻՒՆ

ԱՆԻ ԳԱՂՊՈՒՄ

ՄԱՆ ԳԱՂՊՈՒՄ

ԱՆՈՒՐԵԱՆԻ ԽՈՐԲԵՐԷՆ

(Մեր մասնաւոր Եղեցիկներ)

Անի քաղաքը նստեր կ'ուլայ,
չկայ ասող մի լար մի լար...

Առուու է, ընկերներով գուրս
կ'ուգամ էջմիածնի վեհարանից:

Մի թախտոտ երկիրք, մեծ ու ա-
նոր մի գունատ սաւանն է փուռ մի
անվերջանալի տարածութեան վրայ:

Շան հաշոցի ձայն չէր լսուում,
մենք Պոլսում հէնց ամէն առաւօտ
անխուսափելի կերպով ունկնդրում
ենք...

Մի քիչ կանգ առնում եմ վեհա-
րանի լուսնամուտին եւ դիտում եմ
սիրուն տղամարդեր եւ աղամար-
դուհիներ. սրանք հագել են գեղեցիկ
շորեր, անձայն գնում են ումանք,
մին բաղում է մի բրդուճ Հայ ֆէ-
տայի կեանքից:

...Ու կը գնանք մեր նպատակին
Անի կերթանք:

Փոթորիկ կար այդ օր երկնքում.
Փայլակը սկսաւ շողալ. ապա
քամին դադարեց:

Անձրե գալիս էր. քամին հէնց
չարունակուում էր. ոչինչ սակայն մեզ
չէր արգելում. միշտ առաջ էինք
մղում մեր ոտներին: Չէինք վախե-
նար ոչ քամու մռնչիւնից եւ ոչ ամ-
պերի գոռացումը: Անտուր համարեա
միթեւ էր. փայլակը ընդհատ լոյս
էր տփուում նրա մէջ եւ ապա անեղ
որոտմունքով ծմակի խորքերը դըր-
դեցնում էր: Հսկայ ծառերի թեր-
թիկները հանում էին մի անեղ սօստ.
փուն...

Մտնում ենք Անի...

Անի մէկ տափարակ դուռ տեղ
բաց ա ըլլում. քանի գնում ա մարդ
ամպ ու դուռան քաշում նայում-
քի առջևից:

Հէնց իմանում ես մէկ էնպէս
քաղաք ա բաց ըլլում որ հազար—
հազար կենող միջուկն ունի. ու ցըն-
դի մի շողի ձեռից բեղարած, տես-
չանա տեսնել ու չես կարողանալ:

Մի տեղ մի քօշք, մի տեղ
կոթողներ, արծաթն աղպի հետ
պէտք է խառը ընկայ ըլի: Հէնց կար-
ծում ես թէ ցորեկը Անի քաղաքում
թողն ու տուժանք աչքդ ա բռնում:
Ինս ջինս չես տեսնում...

Յանկարծ տեսնում ենք Ախուր-
եանը...

Ի՛նչ է յիշեցնում Ախուրեանը...
Դուք յիշեցնում է ասոր, կին,
ջահլ ու գեղեցիկ, որ միս միսակ
լալիս է, Անիի անապատի ամայու-
թեան մէջ կեցրած...

Ո՛ւհ այս վշտոտ Ախուրեանը...
Նրա ձայնը ոչ վիրաւոր գազանի
մռնջիւն է. ոչ մի ագուաւի կոկոսց,
այլ մեղմ թախտոտ վշտոց, էնպէս,
ինչպէս սուրբը մոլորած հովերի...

Երբ գնաք Անի, բարեկամ ըն-
թերցո՛ղ՝ Պոլսահայու սատիւական
թերթի, անպատճառ բարձրացրէք
Աղջկաբերդի կատարումը, որը եր-
թալու համար մի նեղ արահետից.
յիշվեցէ՛ք քաղաքին, սողապէք թէ-
կուգ... ու ձեր աչքի առջև հէնց
պարզում է... հին օրերի տեսա-
բաններից մին...

Եւ հեռո՛ւն...

Դէ՛հ գնացէք տեսնելու Անին ու
Ախուրեանին իր ձորում... որի եր-
կայնքում ցած իջած տկուր պատեր
են երկարում...

Ու քիչ հեռուն ամպերի մէջ
թրուած լեռներ...

Մեկնում ենք Անիից ու լալիս
ենք... լալիս...

Բանաստեղծ

ՅԱԿՈԲ ՏԵՐ ՅԱԿՈԲԵԱՆ

(Անիի լեռներում
գրուած)

(Մերինը)

ՄԻԱՅԱՄ... ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԸ

Ո՛ղ է ըսել թէ Հայուն մէջ միշտ
անմիաբանութիւնը կը աւրէ:

Պօշ խօսք:

Հայը միշտ միաբանած է, երբ

պէտք տեսնուած է տապալել Թաղ. խորհուրդը մը, կամ երբ դիտուած է որ այս ինչ տեղը բաւական կըրիկ գումար մը կայ... ուստի ինչ:

Եւ երբ Հայը կը միաբանի, մա- նաւանդ. այս օրերուս, Թուրքին ու Յոյնին հետ, անշուշտ պիտի միաբա- նէր նաեւ... Հայուն հետ:

Ուստի Բերայի երիտասարդները օր մը ելան և միացան: Թէև արդէն կը միանային ամէն իրիկուն Թօգաթ- լեանի մէջ, բայց այդ միացումը կուտ մը չէր արժէր անոր համար որ պաշտօնական գոյն չունէր և յետոյ խմուած գարեջուրի և կերուած փառ- ճաներուն փարաները իրենց զրպա- նէն կը տուէին:

Հետեւեալ Բերայի երիտասարդ- ները որոշեցին իրենց միացումներուն պաշտօնական գոյն մը տալ: Նախ անուն մը դնել որոշեցին և երկու շարժուման մէջ գտան անուն մը... Բերայի Երիտասարդաց Միութիւն:

Այսպէսով այլևս կ'ազատէին ա- մէն իրիկուն դրամ տալ և Միութեան կանոնադրին համաձայն այլև- այլներ, ինչպէս ես, դու, սա, դա, նա, ստիպուած պիտի ըլլային ամ- սովճարներով... վճարել միութեան վարչական խորհուրդին խմած գա- րեջուրներուն դրամները:

Ինչ կ'ընեն այս երիտասարդ- ները:

Ըստ կանոնադրի պիտի ընեն շատ մը բաներ:

Ըստ երեւոյթին ըրին շատ մը բա- ներ:

Բայց ըստ մեր... գիտցածին դեռ մինչև այսօր բացի ներկայացում մը սարքելէ, դեռ ոչինչ ըրին:

Ո՛հ, ներողութիւն. միայն թէ շարժաթ գլխեր դարձեալ հաւաքուե- ցան Թօգաթլեանի սրահներում և... տապալեցին Միութեան... Դահ- լիճը:

Եւ աշխարհիս չորս ծայրերը քաշ- ուած հեռագիրներ, կայծակի արա- գութեամբ տարածեցին այս Դահլի- ճին անկուսին լուրը:

Բարիդի, Լոնտոնի, Նիւ-Եօքքի, Վիեննայի, Հոտմի, Ղալաթիոյ ու... Մերսինի Պորտաները սարսեցան. բո- լոր արժէթուղիները կէտուակէն ին- կան վար... Դահլիճին հետ մէկտեղ: Փորձառու քաղաքագէտներ, նշանա- ւոր խաղացողներ, նոյն իսկ Բլէ- մանոս, Սըր Էտկար Կրէյ, Յոն Պիւ- լով, Պ. Իզլուսթի, Պ. Լարչէֆ և ... Արբանյակ Սլավոնան երբէք չէին յիշեր ո և է Դահլիճի անկում մը որ այսքան սարսափ սփռած ըլ- լար... Պորտաներուն մէջ:

Նոյն իսկ շարժաթ իրիկուն Թօ- քաթլեանի յաճախորդներէն դիտել տուողներ կային թէ, հարիւրին ին- նըսուն՝ Սըլանտիար պիտի փլէր այս ցնցումէն, եթէ չենք ճիշտեցնելով բռնուած չըլլար:

Ու անկեալ... Հրեշտակին, Դահ- լիճին ըսել կ'ուզենք, յաջորդեց կանգնեալ Դահլիճ մը, որ միտք ու- նի Բերային հանդիսատես ընել կարգ մը չտեսնուած բաներու:

Նոր դահլիճը նախ ծրագիր մը պատրաստեց որուն համեմատ.

Ա.—Մէն մի անգամ պարտաւոր պիտի ըլլայ տարեկան առնուազն հազար ոսկի վճարելու:

Բ.—Միութիւնը Բերայի կտրեւոր կեդրոններուն մէջ գտնուած բոլոր արտաներ պիտի գնէ և այդ հողերը ընկերութեան անդամներուն կողմէ հերկել պիտի տայ ու ցորեն պիտի ցանէ, որպէս զի Անատոլիոյ սովեալ նահանգներուն հաց հասցնէ:

Գ.—Ոյժ պիտի տայ մասնաւորա- բար նպատակաւ միութեան գործին, որպէս զի միութեան անդամները կարենան ճոխ կեանք մը վարել. ամէն Հայ պարտաւոր պիտի ըլլայ բան մը վճարելու, չվճարողներուն առաջին անգամ ազգաբարձրութիւն մը պիտի ըլլայ, երկրորդին սպառ- նալիք և երրորդին իրեն պիտի զըր- կուի կարծիք կնիքով վերջնապէս մը. իսկ եթէ դարձեալ չը վճարեց՝ միութեան իր նաւատորմը պիտի զրկէ որպէս զի ցոյց մը ընէ:

Դ.—Միութիւնը պիտի առնուի, բո- քէի, նարտի, պարի և թղթախաղի զանազան տեսակներու գասթրոնոմի- ներ պիտի հաստատէ և մասնագէտ- ներու պիտի յանձնէ այդ ուսումնե- րուն աւանդութիւնը:

Ե.—Միութիւնը ֆեֆը ուղած մարդիքը միայն իրեն անգամ պիտի արձանագրէ, որպէս զի այս գործը չը դադրի ֆեյֆէի բան մը ըլլալէ:

ԹԱՓԱՌՈՂՈՐԴԻ ԲԵՐԱՅԻ ՄԸ

ԿԻԿՈ-ԹՕԿՈ ՅԵՂԱՓՈԽԻԿԻԱՆ
ԱՆԿԱԶՄԱԿԵՐՊԵԱԼ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԱՆ
ԼԱՃԻՎԻԿՍ ՏԵՏՐԻԿԵ

[Այս տեսակը քեւ քոշած էինք դեղին կոշիկով հրատարակել, բայց վերջին պահուն Զինու կառավարու- քիւնը դեղին կոշիկով հրատարակած ըլլալուն, մենք մեր տեսակին կոշիկը Լաճիվիկս անդիցինք]:

Կիկո-Թօկո անկազմակերպեալ յե- ղափոխական կուսակցութեան երկու նախագահները նկատելով որ իրենց կուսակցութիւնը հակառակ իր հակայ բանակներուն, նաւատորմին և իր լայնատարած տէրութեան, որուն սահմանները կը տարածուին մինչև թա՛... Հնդկաց ուղիւնուն ու Բա- լիկոսոյ գաւառները հիւսիսի կող- մէն. իսկ հարաւէն մինչև Խաղաղա- կան ուղիւնուն ու Հարաւային Ա- մերիկայի մաս մը մնացած, արեւել- քէն՝ մինչև Ատրեստան ու արեւ- մուտքէն մինչև Կարկեղոն ու Պոն- տոս, նկատելով նաև որ հակառակ այս ամէնուն վեց մեծ տէրութիւն- ները դեռ մինչև այսօր Կիկո-Թօկոյի կուսակցութիւնը դեռ իրենց մէջ չառին ու եօթերորդ մեծ տէրու- թիւնը չհռչակեցին մեր կառավարու- թիւնը, նկատելով նաև որ մեր տէ- րութիւնը մինակն է որ մինչև այսօր 7842½ պատերազմներ մղած և ա- մէնուն ալ յաղթած է, որոշեցինք վերջին անգամ ըլլալով վերջնապէս մը զրկել բոլոր մեծ, պղտիկ ու մի- ջակ թագաւորութիւններուն, կայս- րութիւններուն, հանրապետութիւն- ներուն, Սահմանադրականներուն,

իշխանապետութիւններուն, կէս-իշ- խանապետութիւններուն, դքսու- թիւններուն ու կոմսութիւններուն և հրամայել որ անյապաղ մինչև յա- ռաջիկայ ամսուն կէս զիչերը երկու ժամ անցած պատասխան մը տան թէ մեր կուսակցութիւնը անյուցած են վեց մեծ տէրութիւններուն մէջ:

Հակառակ պարագային Կիկո-Թօ- կո Անկազմակերպեալ Յեղափոխա- կան Կուսակցութեան երկու նախա- գահները որոշած են հրաժայել իրենց բանակներուն որ ցա՛աքէն պաշարեն ամբողջ Եւրոպան, իսկ ծովու կող- մէն մեր նաւատորմը պիտի ուժակո- ծէ ծովեզերքի բոլոր եւրոպական նաւահանգիստները:

Կիկո-Թօկո յեղափոխական ան- կազմակերպեալ կուսակցութեան այս Լաճիվիկս Տետրիկէն թէև բազմա- թիւ օրինակներ ապա՛ծ ենք բայց տակաւին կազմարարին դրամը վը- ճարած չըլլալուն, առայժմ անկազ- մօրէն պիտի զրկենք, որուն մասին վստահ ենք տէրութիւններու ներո- ղամտութեան:

Անկազմակերպեալ
Յեղափոխական Կուսակցութեան
Երկու նախագահները
ԿԻԿՈ-ԹՕԿՈ

ՊԵՏՐՈՍ ՀԱՄԱՄԵԱՆ ԿԸ ԲՈՂՈՔԷ

Չորս ամիսէ ի վեր է որ Սահմա- նադրութիւնը հաստատուեցաւ... իբր թէ, Պետրոս Համամեան անուն մարդուկ մը ելաւ մէջտեղ:

Ա՛ս ալ Սահմանադրութեան վը- նաններէն մէկը կրնաք նկատել:

Գոնէ Սահմանադրութեան առաջ ասանկ փորձանք մը չունէինք:

Սահմանադրութիւնը եկաւ և հետը բերաւ Պետրոս Համամեանը:

Այս մարդուկը կ'երևի թէ ուրիշ գործ չունի:

Սահմանադրութիւնը եկած օրէն ի վեր ամէն բանի գէ՛մ կը բողոքէ: Բողոքած ըլլալու համար լոկ կը բողոքէ:

Երբ մարդ Պետրոս Համամեանի նման ուրիշ գործ չունենայ, հարկաւ կը նստի ասանկ պօշ բաներով ըն- թերցողներու գլուխը կ'արգելէ:

Բայց մարդը մեզի պէս չի խոր- հիր եղեր իր մասին:

Ան կը կարծէ եղեր թէ իր գը- րածները մեծ յայանութիւններ են և թէ ինք մեծ ծառայութիւն կը մա- տուցանէ կոր ազգին ու պետու- թեան:

Ատոր վրայ միտքը դրեր է որ անպատճառ ինք պիտի ըլլայ հարիւ- րին հարիւր Հայ երեսփոխանը Պոլ- սի:

Ալ մտածեցէ՛ք իր յուսահատու- թիւնը, երբ կը տեսնէ թէ ինք չէ ընտրուած, այլ Գրիգոր Զօհրապը և Պետրոս Հալաճեանը:

Եւ որովհետեւ ուրիշ գործ չունի, կը սկսի ասոր ալ բողոքել:

—Երբ ես կեցեր եմ ձեր դիմացը, ինչպէս դուք կը համարձակիք ինչ զատ մարդ ընտրել Օսմ. Խորհրդա- բանին, կը պօռայ Արեւելքի մէջ:

«Պետրոս Հալաճեանը քանի՞ յօդ- ուած գրած է, մինչ ես ա՛յնչափ յօդուածներ գրեցի:

«Պետրոս Հալաճեան ինչ խօսե- ցաւ մինչև այսօր, մինչ ես առտու իրիկուն կը խօսիմ կոր»:

Ինչո՞ք Պետրոս Համամեան, բար- կութենէն և յուսահատութենէն ինք- զինքը պիտի ուտէ:

Արդեօք կը սպասէր որ զինքը անգամ ընտրէինք Օսմ. Խորհրդա- բանի, փոխանակ Զօհրապի կամ Հալաճեանի:

Չէ՛, պարո՛ն, մենք պօշ մարդ չենք ուզեր Օսմ. Խորհրդաբանին մէջ:

Թո՛ղ յօդուած չգրէ Արեւելքի մէջ, թո՛ղ պօշպօղապութիւն ալ չը- նէ, բայց մա՛րդ ըլլայ:

Այսօր Զօհրապի կամ Հալաճեանի տեղ ո՛վ ալ երեսփոխան ընտրուած ըլլար, անպատճառ անոնց գէ՛մ պի- տի գրելիք, քանի որ ձեր նպատակը բողոքել է:

Եթէ Շահնապարը ընտրուած ըլ- լար, այն ատեն ալ զայն անար- ժան պիտի գտնէիք, եթէ Պէկեանը ընտրուած ըլլար, այն ատեն Պէկեա- նին պարտաւ մարդ մը եղած ըլլալը ապացոյց ցանկու պիտի ջանայիք, եթէ Զարդարեանը ըլլար ընտրուած, պիտի գրէիք որ անիկա ո՛վ է որ երեսփոխան կ'ըլլայ կոր:

Հապա՛ ըսէ ձեզի՛ ո՞րն է լաւա- գոյն երեսփոխանը որուն գէ՛մ չպիտի բողոքէիք և որ շատ արժանի պիտի ըլլար իր արժոնին:

Անտարակոյս Տիար Պետրոս Հա- մամեանը, որ ա՛յնչափ յօդուածներ գրած է և որ ա՛յնչափ լաւ գիտէ չափել Պոլսոյ մայրքը:

Վստահ եմ որ եթէ այս մարդը ընտրուած ըլլար Պոլսոյ Հայ երես- փոխան, տո՛ղ մը իսկ բան չպիտի գրէիք անոր գէ՛մ:

Այլ պիտի ծափահարէիք, երկինք- ները պիտի հանէիք, որովհետեւ այդ մարդը... դո՛ւք էք:

Բայց եկէ՛ք տեսէք որ ազգն ալ ձեզի պէս մարդոց գրածը իսկ չի կարդար:

Ի՛նք աղգին սքանչելի յատկու- թիւններէն մէկն ալ սա՛ է:

Ի՛նք դատ մարդու չենք հաւ- նիր մինք:

«Ինչ զատ ամէ՛ն մարդ ապուշ է», — ահա՛ մեր սկզբունքը:

Պետրոս Հալաճեան երեսփոխա՞ն ընտրուեցաւ...

Անմիջապէս կը սկսին.

—Առ ո՛վ կ'ըլլայ կոր, ինչ ծառայութիւն մատուցած է, քանի՞ փարայի մարդ է...

Ի՛նք աղգը այս կերպով կործա- նած է ահա՛:

Վաղը եթէ Յիսուս Բրիստոս եր- կինքէն վար իջնէ՛ Հայ երեսփոխան ըլլալու համար, վստահ եմ որ անո՛ր վրայ ալ թերութիւններ պիտի գըտ- նենք և մեր բոլոր ձեզը պիտի թա- փենք անոր երեսփոխանութիւնը ճշիշ հանելու համար:

Կեցցէ՛ Հայ աղգը:

ԸՆԴԱՍԵՐ ՄԵԼՈ

ԲԵՐԱՅԻ ... ԱՇԽԱՐՀԵՆ

Բերան մայրաքաղաքի թաղերուն մէջ այն դերը կը կատարէ, ինչ որ որ կը կատարէ լեզուն տըգեղ կնոջ մը քով: Երկուքն ալ տըգեղութիւնները կը ծածկեն: Բերան և կինը ներկայանալի վիճակի մը կը վերածնն:

Պոլիսը առանց Բերայի... Խաւթանայութեւ մը պիտի կ'արժէիր և տգեղ կին մը առանց սիրուն խօսակցութեան... անտանելի է:

Արդ Բերան կիրակի օր պիտի ունենար իր... ուրոյն Աբուրիշան, ապա այն որովհետեւ գլխովին և... օտարներն տարբեր էր միւս բոլոր թաղերէն, հետեալաբար չկրցաւ ունենալ թաղ. Խորհուրդը կոչուած այն անասելիւտ և չնաշխարհիկ մարդոց խումբը, որոնք հակառակ իրենց տունը խօսի կառավարելու անկարողութեան, ինքզինքնին կարող կը զգան վարելու Բերայի պէս այլապէս, այլասեւ և մեծամասնութեամբ քօնաժողով մարդոցմէ կազմուած բնակչութիւն մը:

Երեւակայեցէք, օրինակի համար, մի րոյն Թէոտորոս Հայագործեան մը, որ նոյն իսկ անկարող եղած է կ'ըսեն, կապելու իր վարտիքը և նախ ինք շատ պէտք ունի խնամակալի մը, երբ ինքզինքը ֆանթազիա ներկայացուցեր է Բերայի... Սիրաքիանային, (Թաղ. Խորհուրդին ըսել կ'ուզենք):

Արդ, կիրակի օր, Բերայի Հայը գործի վրայ էր:

Եւ այն ամէն տեղերը որ Հայը Թաղ. Խորհուրդը մը ունի ընտրելիք անպատճառ ամէն բան կը մոռնայ, նոյն իսկ հաց ուտելը ու տունին պակասութիւնները և կ'երթայ ճակատամարտելու... եկեղեցւոյ բակին մէջ, ընդդէմ անոնց որոնք կ'ուզեն թաղական ըլլալ:

Ձեռ գլխեր թէ ասով ինչ կը շահի... արդէն ինքն ալ չի գիտեր թէ ինչու և ինչ բանի համար կը կուտի. միայն իր պապէն, մամէն, հօրմէն վերջապէս բոլոր սինսիդիէն լսել է որ թաղականի ընտրութեանը միջոցին պէտք է կոխ ընել, հայհոյել և առանց ասոնց ընտրուած Թաղ. Խորհուրդը մը... ընտրուել չէ:

Աղբիւրներ ինչպէս մը, որ իր դասական իմաստէն բան մը չի կորսնցնել, ըլլայ այդ սկզբունքը... Տօլստոյեցի ձկնորս Ռաբիկի քով և կամ... մեծ տէրութեանց շարքին մէջ գտնուող ու է կառավարութեան մը քով:

Եւ ճիշտ այս սկզբունքին համար ու այս... տիրացուական դադարփառներէն մղուած՝ կիրակի առաւօտ արշալոյսէն մինչև կէս գիշերը երկու ժամ անցած, Բերայի եկեղեցիին բակը, ու Արուեստանոցի սրահներուն մէջ պարզուեցաւ մէկը այն տեսարաններէն, որոնք այնքան յաճախակի տեղի կ'ունենան... Դա լաթիոյ Պորսային մէջ:

Կարգ մը մարդիկ «կ'ուզենք» կը պօռային, առանց զիտնալու թէ ինչ էր ուղածին, բայց որովհետեւ

Թէոտորոս Հայագործեան տառապանքն ու քսանական զրուշ բաժնած էր անոնց, ինչպէս կ'ըսէին, հետեւաբար մարդիկը, պարտ անձին կը համարէին իրենց բոլոր ուժովը և ձայներնին որքան որ կ'ելլար, պօռուտ համար թէ «կ'ուզենք»:

Մաս մը թաղեցիներ ալ նոյն քօնով... «չենք ուզեր» կը պօռային, դարձեալ առանց զիտնալու թէ ինչու:

Այսպէս կամ այնպէս՝ կէս գիշերին մաս մը մնացած՝ ամէն մարդ, այլեւս մոռցած թաղական, եկեղեցի, Դպրոց և Հոգաբարձութիւն և միայն մօտիկ ընելով իր... փորին բողբոջները և այդ գոռում գոչումներէն ու բողբոջներէն աղբուած...:

Բայց ձգենք այն բոլոր հավիտեններ, որոնք կիրակի առաւօտ աղմուսէրով սկսած էին մեկնադրուել ընդհանուր կարգ մը թաղեցիներու լայն փորին մէջ:

... Կէս գիշեր... Բերան կը քնանայ՝ ոմանք առանձին և ոմանք զոյգ...: Ձիւնը կ'իջնէ բաթիլ բաթիլ, հետեւ ալ անձրեւ կաթիլ կաթիլ:

Թաղեցիները կը մեկնին՝ քուէները ձգելով միւս միւսակ:

Այս անգամ ալ ջուրը ինկած էր... Բերայի Աբուրիշանային ընտրութիւնները, որովհետեւ այս անգամ ալ այլեւս յայտնի զեղծումներ տեսնուած էին:

Ա.ՈՊ

ԱՊՏԱԿՆԵՐ

Ձախ, բայց մօտիկ ըրէ:

Ձիւնը սկսաւ ցորտն ալ սկսաւ, բռնքն ալ սկսաւ. արդ չենք գիտեր թէ՛ Մեհառեփէն ինչպէս կը կենայ. խեղճ Մեհառեփէ, հակառակ անունիդ ուրիշ շատ մը մարդոց՝ վախճալուն պատճառ կ'ըլլաւ կոր. կը վայել, բայց ասոր հետ մէկտեղ, մինչև այսօր դեռ լաւ մը չկրցանք հասկնալ թէ ինչու կեցեր է հոտ Մեհառեփէն, ինչու:

Արդեօք Աշոտ Բէչեանը գիտէ...:

Տաճատ աղան դեռ փակել ու փրկու կ'երազէ եղեր. անցան, այդ օրերը շատոնց անցան...: Տեսար հիմա թէ Իզմիրեանը քու գիտցած և կամ երեւակայած Պատրիարքներու հերքէք չի նմանիր եղեր: Մօռե ինչ ստուաք էր այդ ստուաք, որ ելար և չնորհաւորական գառը գրեցիր: Ինչ կայի, ինչ կայի... Բնօսեցէ, սուտաթ չէ...:

Օսմ. Պանքան չէքէրճիութեան սկսաւ:

Տասնընից վախճալ չաքար բերել տուեր է Աւստրիայէն ի հաշիւ Պոլսոյ վաճառականներուն:

Բայց Պոլսոյ վաճառականները կը մերժեն զնել այդ աւստրիական չաքարը, որով տասնընից վախճալ չաքար կը մնայ Օսմանեան Պանքային վրայ:

Օսմ. Պանքան որոշեց այս չաքարը վրայէն ճեփ ընելու համար՝ առանց խաղըն ուտելու, իր բոլոր պաշտօնեաները ստիպել, որպէս զի միայն իրմէ գնեն չաքարը և ո'չ նպարավաճառներէն: Փոխան ամսականի, քանի մը օրս չաքար պիտի տրուի Պանքայի պաշտօնեաներուն:

Ալ՝ հիմա յառաջդիմեցինք, քանի որ Օսմ. Պանքան... շեփեթութեան սկսաւ:

Թնդանութեան վերատեսչութիւնը պոյքօթէ վաղ անցած ըլլալով՝ աւստրիական դործարաններու ազմանիւթ ապսպրեր է:

— Հապա պոյքօթը, հարցուցինք:

— Ճանրմ, անոնք աւելի աժան կուտան կոր, պատասխանեցին:

Խաչոր, խըտալ պոյքօթ կ'ընենք մենք:

Կը խնդրուի Գալֆեան Սորա-նոցէն որ հաճի Մանկանց Մադիկի միջոցաւ Օր. Յուլիանէ Սարգիսեանէ ստացած 60 դրշի ընկալագիրը մեզ ղրկել:

Հուզուող Ունուրիյէ երթալով ճիշտ Կուկուրը Ունուրիյէ կ'ըլլայ, տեսէք թէ այս արդարադատ, խղճամիտ, ճշմարտասօս, և անկեղծ թերթը ինչ կ'ըսէ. — Գրեգոր Զօհրապ Երեսի. չը կրնար ընտրուիլ անոր համար որ հին բռնակալ Ռէփի միջոցին ռուսական դեսպանատունը ապաստաներ է եղեր: Վա՛յ. ըսելէ ասիկայ յանցանք մըն է. իսկ անդին հին խաֆիէներ, ժողովարարներ, ռեալիստներ կրնան Երեսի. ըլլալ. անանկ չէ: Բայց ասիկա անհանդուրժելի է Պ. Կուկուրը Ունուրիյէ եւ չափազանց... հին Ռէփի միջոցաւ Դեռ կը տեսնուինք:

Թաղապետական պաշտօնեաներուն հագուստները պիտի փոխուին. գերմանական սիսաթմով: Թուրքիոյ մէջ գործերը ասանկ կ'երթան, միայն չորհրդը կը փոխուին...:

Օսմ. զինուորները ասկէ վերջ Պուլկարի վիլաւ պիտի ուտեն, բըրինձի տեղ: Միշտ կը յառաջդիմենք... և կը բարեկարգուինք նախ մեր պողոպտէն սլոնով:

Հայոց թիւը երթալով կը շատնայ կոր, ինչէն է. արդեօք 300,000 ջարդուողները հետզհետէ կ'ողջնան Պ. Ներքին գործոց նախարար:

Սուլթանին կարգ մը թիկնապահներէն ոմանք այսուհետեւ Սելամըքին ներկայ չպիտի գտնուին: Ինչու:

Հիւանդանոցի հացն ալ կտրեր են: Կիթ պապանա սէլամ սէյյէ:

Ասոնք ալ Օսմանադրութեան... փնտնեն են: Կարծես թէ օգուտը տեսանք...:

Իզմաֆի նախարարութիւնը մէկ կողմ ձգել է կարգ մը երկրորդ կողմող փաշաներուն ձեռքին մէջ գտնուած և անիրաւաբար գրաւուած կառավարներուն խնդրը, և երբ Հի-

ւանդանոցի սեփական մէկ գետինը գրաւել կ'ուզէ: Արդեօք այս Օսմանադրական կառավարութիւնը այս կերպով կը հասկնայ արդարութիւնը, հաւասարութիւնը. եթէ ասանկ կը հասկնայ, այն ատեն վա՛յ է եկեր իր գլխին: Խնդր տեսէք ասանկ Օսմանադրութեան:

Իզմիրի Յոյները անպատճառ Յոյն Երեսի. ունենալ կ'ուզեն, եւ զէնք կը պարպեն ու կը կենան: Եթէ ուզելը բաւական ըլլար, մենք ալ շատ բան պիտի ուզէինք:

Բ. Դուռը պաշտօնապէս իմացեր է որ Գարատաղ զինուորական պատաստութիւններ կը տեսնէ:

Կր տեսնէ՞ք մեր գլխուն եկածը: Մենք ալ հրամայեցինք Գուրչուրու խանի մեր Զորարանակներու և նաւատորմիներու հրամատարներուն, որ պատրաստ կենան մեր թնդանութիւն առաջին հարուածին:

Սագալը Մէհմէտ փաշա նորէն պաշտօնի գլուխ անցեր է:

Ե՛տ կ'երթանք կոր թէ առաջ: «Մէյ մը առաջ, մէյ մը ետ»...: Զափրաստը ասանկ պար մը ունէր:

Պ. Գասէլ՝ Էտուրտ թագաւորին պանքէրը որ Օսմ. կառավարութեան 11/2 միլիոն ոսկի փոխ պիտի տայ, Պոլիս ժամանեց:

Կը խնդրուի Պ. Գասէլէ որ Բ. Դուռը չգացած, մէյ մը Գուրչուրու Խան հանդիպի:

Մենք աւելի՛ պէտք ունինք, խաչոր:

Շարաթ գիշեր, շարաթ գիշեր, շարաթ գիշեր... գացէք Գարատաղի ձմեռային թատրոնը ու «Լեզատ թատրոնի» խումբը պիտի ներկայացնէ «Երթանք գրօսուն»... յետոյ մէկ զաւեշտ մը՝ «Մենք ու Փետան» և ազատութեան արօքօքը պիտի կատարէ Օր. Էլիզ Պինչմէնէն և պիտի արտասանէ Ա. Զօպանեանի «Մայր Հայաստանը» Ֆէտայի տալազով: Գացէք տեսէք Օր. Էլիզը, վաղուան Սառա Պեռնաուր, այդ չընորհազեղ դերասանուհին, Օր. Բա-մէլիայի վաղուան մատամ ժիւտիզը, Ենովք Շահէնը՝ վաղուան Մուսէ Սիւլէյմ, Շահինը՝ վաղուան Կալիբօն, Մատթեանը՝ վաղուան Նովէլլին և մեր բոլոր վաղուան մեծ դերասանները:

Օսմ. Օսմանադրական և արդատ կառավարութիւնը որոշեց անպարտ արձակել Գէոր Ալին, և երեք ամսուան բանտարկութեան դատապարտել Հուզուող Ունուրիյէ արածատէր Բիթաթ պէյը: Առաջինը յանցաւոր չէ եղեր՝ Օսմանադրութիւնը ջնջել ուզելով հանդերձ, իսկ երկրորդը պէ՛տք է դատապարտուի, որովհետեւ նախարարներուն դէմ գրեր է...: Ո՛վ Օսմանադրութիւն, հո՞ս ևս թէ մեկնեցար Պոլիսէն...:

ՎԱՂԸ «ԿԱՎՈՇ»
ԱՐՏՕՆԱՏԵՐ Ա. ՍԱԳԱՆԱՆ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՍԱԳԱՆԱՆ

ԴԵՂԱԳՈՐԾՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱԿԱՐԵՒՈՐ
Շ Ի Շ Ե Ր
(Verres pharmaceutique)

Դեղարաններու և դեղորէից վաճառականներուն համար մասնաւոր շինուած շիշերը մինչև հիմա Հրեայ վաճառական մը մօտօք ըրած էր: Այժմ ուրախ ենք յայտարարելու որ տիար Մկրտիչ Պողոսօֆ (Ալլըր էֆէնտի խան, թիւ 27 գրասենեակը) ձեռնարկած է այս գործին և ունի ճոխ ու այլազան մթերք մը այդ կարգի ամէն կերպ շիշերու և կարող է մրցիլ ամէն կերպով: Վստահ և ապահով ենք որ թէ՛ Պոլսոյ և թէ՛ գաւառի մեր բոլոր Հայ դեղագործները և տոկիսները պիտի փութան իրենց գնումը ընել այս Հայ և այս ճիւղին մէջ մէկ հատիկ առեւտրական տունէն, քաջալերելու համար Հայ ձեռնարկուն որ միեւնոյն ատեն ամանութիւնը քնաքան ընտրած է իրեն:

ՈՍԿԵՐԶԱՏՈՒՆ
“ՔՐԻՍԹՕՖԼ”
ՄԻ ՄԻԱՅՆ ՄԷԿ ՀԱՏԻԿ ՏԵՍԱԿ
ԱՄԵՆԱԿԱՌԱԳՈՅՆ
ԶԱՅՆ ՈՒՆԵՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ
ՊԱՀԱՆՋԵՑԷՔ
Այս մարման և «ՔՐԻՍԹՕՖԼ» անունը
Ամեն մէկ կտրին վրայ



VALSE
BRILLANTE

ԳԻՆԴԱՐ ԹՈԼԱՅԱՆԻ
Գին 5 դրու

Կեդրոնատեղին է մեր Խմագրատունը
Կը ծախուի Կ. Պոլսոյ բոլոր երաժշտ.
խանութներուն մէջ

ՖՐԱՆՍԱԿԱՆ ԱՄԵՆԱԸՆՏԻՐ ԱՍԹԻԿ

Զմեռը մօտեցաւ, անձրևները սկսան, հետեւաբար լասթիկները և լա՛ւ լասթիկները կարեւոր մէկ առարկան սկսան ըլլալ դարձեալ մեզի... մահկանացուներու համար:
Լաւ լասթիկ ունենալը կը նշանակէ թէ լաւ խելք ունիք և շնորհքով մարդիկ էք: Արդ դիմեցէք, գացէք ատէք Պրանսական այն լասթիկները որոնք շատ քիչ մնացած են և համիս կառանքիով կը տրուին: Անցեալ տարի այս ապրանքը կամուրջին գլուխը ճեղքեցին խանութը փոքր քանակ, իսկ Ալլըր էֆ. խան, Նօ. 27 Պողոսօֆի քով կը ծախուէր մեծաքանակ. հիմայ թէ մեծաքանակ և թէ փոքրաքանակ կը ծախուի Պոլս, Ալլըր էֆ. խան, թիւ 27, տիար Մկրտիչ Պողոսօֆի գրասենեակը:
Ո՛վ Ծաղիկի և Կալոռոջի ընթերցողներ, վաղեցէ՛ք տիար Պողոսօֆի քով և անպատճառ գնեցէ՛ք հատ մը:
Բերայի յաճախորդաց գիրութեան համար, մանաւանդ կանանց, սոյն ապրանքներուն ամէն տեսակներէն կը գտնուի դերձակ Տիար Երուանդ Միրճանեանի քով, Կալաթա Սէրայի քովի փողոց թիւ 14 աբարթըմանը:

La Grande Fabrique
S. STEIN
1908Ի ՉՄԲԱՆ ԵՒ ԱՇՆԱՆ
ՆՈՐՈՑԹՆԵՐԸ
Փ Ն Տ Ո Ւ Ե Ց Է Ք
Շ Թ Ա Յ Ն
Վ ՀԱՌԱՏԱՆՑ ՄԷՋ
ՀԱՆԱԹԻԱ ԵՒ ՊՈԼԻՍ



ՎԱՅԵԼՉԱՍԷՐ ԿԻՆԵՐԸ
ՈՐՈՆՔ Կ՛ՈՒՋԵՆ ՊԱՀՊԱՆԵԼ

ԻՐԵՆՑ ԳԵՂԵՑԿՈՒԹԻՒՆԸ
ԳԷՏՔ Ե ԱՄԷՆ ՕՐ ԿՈՐԾԱԾԵՆ
ՃԵՄԱՐԻՑ
ՔՐԷՄ ՍԻՄՈՆԸ

ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՄԵ ԿԱՐԴԱԼ ՀԵՏԵԻՆԱԼ ՏՈՂԵՐԸ

ԿԵՈՋ ՄԸ ԳԵՂԵՑԿՈՒԹԻՒՆԸ Կատարեալ չըլլար՝ առանց գոյնի, մաքրութեան: Բոլոր այն տիկիները որոնք հոգը ունին այս թանկագին ձիւքերը անկողնուս պահելու, պէտք է բացարձակապէս մերժեն գործածութիւնը այն ամանագին արտադրութիւններուն որոնք չունենալիք ունենալիքով ծախու. կը հանուին Գործածուած նախնական նիւթերուն ստորին տեսակէ ըլլալն է որ ներքի կ'ընէ ալյոքան աման ծախել զանոնք: Այս պատճառաւ նուազ ստորին տեսակները պատրաստուած են մեղրամոմով կամ օճառով, որոնք օդին մէջ կ'չորանան, և միւս տեսակները, աւելի վտանգաւոր մորթին համար, կ'պարունակեն այն տեսակ ճարպեր որոնք կ'ծծոնեն և քիչ ատենէն առաջ կ'ընեն անդամանելի կարմրութիւններ և խորշոմներ:

Միայն ՔՐԷՄ ՍԻՄՈՆԸ հնարուած 1860ին, զուտ նշայի կշիւ ակտիւ քաղաղութեամբ՝ առանց ո՛ր և է նիւթի, իրապէս առողջապահական արտադրութիւն մըն է. բովանդակ աշխարհի մէջ բոլոր վայելչասէր կիներէն ընդունուած է և նոյն իսկ իր անունը յաջողութեան պատճառաւ է որ բաղմաթիւ կեղծ նմանութիւններ երեւան կ'ընեն ամէն օր: 1900ի տիկերական Արուեստահանդէսին մէջ արժանացած է Ոսկի Միտալի:

Ի հարկէ ՔՐԷՄ ՍԻՄՈՆԸ գինը աւելի բարձր է կեղծ պատրաստութիւններու գինէն և ասոր պատճառը թակապէս իր նախնական նիւթերուն աղնիւ տեսակէ ըլլալն է, որովհետեւ բոլոր ծախողները կ'ընտանովանին թէ հակառակ անոր համեմատաբար բարձր գնոյն՝ նուազ կը չափն նմանօրինակ ուրիշ տեսակներու վրայ:

Բնաւ մի՛ վարանիք ուրեմն պահանջել ճշմարիտ Քրէմ Սիմոնը, միշտ լաւ ուշադրութիւն ընելով վերի վաճառանիշին և յաւէտ եւ ըրաւարդ ու թարմ պիտի մնաք, մինչդեռ ձեր դրացուհիները պիտի պառաւանս՝ ցաւելով իրենց սխալ խնայախրութեան վրայ:

Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհի գիտէ թէ՛
Ս Ի Ն Կ Է Ր
Հայրապիլի ԿԱՅՍ. ՊԱԼԱՏԱՆ The Singer Manufacturing Co
մեքենան լաւագոյնն է. սոյն մեքենան ամէնէն աւելի կատարելագործուածը, հաստատունը եւ դիւրագործածելիին ըլլալուն՝ բոլոր վանդակ աշխարհի մէջ՝ ամէն ոք Սինկերի մեքենաները կը գնէ:
Զեւքի, ոտքի, ու ոտքի եւ ձեւքի միանգամայն մեքենաներ կը գտնուին:

- ՍԻՆԿԷՐԻ մեքենաները կը ծախուին մի միայն Սինկեր Բնկերութեան վաճառատանց մէջ՝
- | | |
|---------|--|
| ԲԵՐԱ. | 1. Մեծ փողոց, Պօն Մառչի գէմ, Թ. 343 և 345 կրկին. |
| | 2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիւնին գէմ. |
| ԿԱԼԱԹԱ. | 1. Սինկեր խան, Թիւնչիլի ետեւը. |
| | 2. Գարաքէոյ, Թրամբլիլի կայարանին գէմ. |
| ՊՈԼԻՍ. | 1. Սուլթան Համամ, Թ. 2 |
| | 2. Սուլթան Պալատ, Թրամբլիլի կայարանին գէմ, Թ. |
| ՍԿԻՏԱՐ. | Չարշը Պոլս, Թ. 120. |

ՇԱԲԱԹԱԿԱՆ ՄԱՍՆԱՎՃԱՐՈՒՄՆԵՐ
Դասերը եւ նորոգութիւնք ձրի.
Կատարեալ երաւեստորութիւն:
Մասաճիւղէր գաւառաց բոլոր քաղաքներուն մեջ:
Սինկերի Ըկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, Թ. 343 եւ 345 կրկին, Սարգիս Պէյ Տիւղզուրի տունը: